

Քննարկված է

Հաստատված է

«Գեղարքունիքի տարածաշրջանային

«Գեղարքունիքի տարածաշրջանային

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

կառավարման խորհրդի

տնօրենի «29» « 12 » 2016թ.

« 07 » « 11 » 2016 թ. նիստում

թիվ 484 հրամանով



**« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- Հաստատությունում առկա (ստացոնայ) ուսուցմամբ ընդունելությունը կատարվում է առնվազն հիմնական կրտություն ունեցող, իսկ հերակա ուսուցմամբ ընդունելությունն՝ առնվազն միջնակարգ կրտություն ունեցող անձանձ դիմումներով:
- Հաստատությունում ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ միցույթային հիմունքով:
- Օտարերկրացիները քոլեջ կարող են ընդունվել միայն վճարովի համակարգ:

2. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Լիազորված մարմնի կողմից տեղերը հատկացնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում տնօրենը հրապարակում է ընդունելիության պայմանների վերաբերյալ հայտարարություն, որը ներառում է դիմորդի փաստաթղթերի ընդունման և մրցույթի անցկացման ժամկետները, յուրաքանչյուր մասնագիտության կրթության ձևի հիմքը հատկացված, հատկացված տեղերի քանակը, ուսման վճարի չափը, ուսման տևողությունը, որակավորումը և այլ տեղեկություններ:
- Առկա ուսուցման մրցույթին մասնակցելու համար դիմորդի փաստաթղթերն ընդունվում են միջև օգոստոսի 25-ը, իսկ հեռակա ուսուցման համար՝ մինչև նոյեմբերի 25-ը:
- Ընդունելիության մրցույթի արդյունքները հրապարակվում են հաստատության տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից հետո:

3. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

- Ընդունելիության գործընթացը կազմակերպելու նպատակով քոլեջի տնօրենի հրամանով ստեղծվում է ընդունվող հանձնաժողով և ընդունելիության գործընթացը սպասարկող տեխնիկական անձնակազմ:
- Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը՝ քոլեջի տնօրենը, նախագահի տեղակալը, պատասխանատու խարտուղարը և անդամները:
- Մրցույթի անցկացման նպատակով ստեղծվում են քննական հանձնաժողովներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել քոլեջի, ինչպես նաև հրավիրված մասնագետներ: Քննական հանձնաժողովի նախագահներին հաստատում է լիազորված մարմինը՝ ընդունող հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ, իսկ կազմերը հաստատում է քոլեջի տնօրենը:

4. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ

- Դիմորդը՝ քուլեջի ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցիչ (ծնողի, որդեգրողի կամ հոգեբարձուի) հետ ներկայացնում է՝
 1. դիմում,
 2. 4 լուսանկար (3x4 չափի),
 3. կրթության մասին փաստաթղթի բնագիրը կամ պատճենը,
 4. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ ծննդյան վկայական),
 5. կցագրման վկայական,
 6. ընտունելիության արտոնությունը հաստատող փաստաթուղթ,
 7. առկայության դեպքում իր ընտրած մասնագիտության համար պահանջվածից ավելի բարձր կրթության ավարտական փաստաթղթի պատճենը,
 8. առկայության դեպքում միջազգային և հանրապետական մրցույթների դիպլոմները,
 9. առկայության դեպքում պետական բարձրագույն ուս. հաստատություն ընդունվելու համար հանձնած ընդունելիության քննությունների գնահատականների վերաբերյալ փաստաթուղթը,
 10. տեղեկանք աշխատանքի վայրից՝ առկայության դեպքում:
- Դիմորդը քուլեջ ընդունվելու համար կարող է դիմել մինչև 2 մասնագիտության հայտագրմամբ՝ մրցույթի առաջին հայտի գերակայության սկզբունքով, անվճար է վճարովի ուսուցման հիմունքով:
- Դիմորդը ընդունելության գործընթացի կազմակերպման և անցկացման համար նախապես վճարում է 1000 դրամ հաստատությանը, որը անկախ ամեն ինչից հետ չի վերադարձվում:

5. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ

Ընդունելության մրցույթն անցկացվում է լիազորված մարմնի կողմից ըստ մասնագիտությունների հատկացված ավճար և վճարովի ուսուցման տեղերում՝ հետևյալ սկզբունքով.

- 1) Անվճար ուսուցման տեղում առաջին հերթին ընդունվում է հիմնական կրթության վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), նախնական մասնագիտական (արհեսագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիրի գնահատականների միջին թվաբանականի և տվյալ մասնագիտության համար ՀՀ ԿԳ նախարարության ընդունելության կարգի ցանկով ընդունելության մրցույթային առարկաների գնահատականների միավորների ընդհանուր առավելագույն գումար ունեցող դիմորդը:

2) Մրցույթային հավասար միավորներ ունենալու դեպքում ըստ սահմանված հերթականության առավելությունը տրվում է՝

ա) մեղալակի դիմորդին,

բ) տվյալ մասնագիտությամբ առավել երկարատև մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող դիմորդին,

գ) պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար քննություններից առավել բարձր գնահատականներ ունեցող դիմորդին,

դ) տվյալ մասնագիտության գծով բարձրագույն կամ մասնագիտական կրթություն ստացած դիմորդին,

ե) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդին,

զ) հիմնական կրթություն վկայականի, միջնակարգ կրթության ատեստատի միավորների (այդ թվում՝ քննական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմի ներդիր գնահատականների առավելագույն միջին թվաբանական ունեցող դիմորդին,

է) ըստ տվյալ մասնագիտության համար սույն կարգի ընդունելության մրցույթային առարկաների ցանկով սահմանված առաջնային համարվող առարկաներից առավել բարձր գնահատականների միավորներ ունեցող դիմորդին,

3. Մրցույթը համարվում է ավարտված, լիազորված մարմնի կողմից հասկացված տեղերը համալրվելու կամ դիմորտների թիվն այդ տեղերից պակաս լինելու դեպքում:

6.ՈՒՍԱՆՈՂԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՄԸ

- Մրցույթը անցած յուրաքանչյուր դիմորդի համար կազմվում է անձնական գործ, որտեղ ընդգրկվում են ընդունելության կանոններով նախատեսված բոլոր փաստաթղթերը:
- Ընդունող հանձնաժողովի համապատասխան որոշմամբ և լրիվ ձևակերպված անձնական գործի հիման վրա քոլեջի տնօրենը 2 աշխատանքային օրվա ընթացքում միցույթով անցած ունեցող դիմորդներին հրամանագրում է որպես ուսանող:
Հրամանագրվածների ցուցակները հրապարակվում են ոչ ուշ քան հրամանագրման հաջորդ օրը:
- Հաստատության տնօրենը հրամանագրված դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որտեղ պարտադիր ամրագրվում են ուսանողի ընտրած

մասնագիտություն, ուսուցման ձևը, տևողությունը, վարձի չափը՝ ըստ տարիների: Պայմանագրով նախատեսված ուսման վարձի չափը ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չէ:

- Ուսանողին հանձնվում է պայմանագրի 2-րդ օրինակը, ուսանողական տոմս և առաջադիմության գրքույկ:
- Ընդունելության կարգի իրականացումը վերահսկում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: